

ՀՏԴ 711.427:502/504

Գ.Ա. ԴԵՄԻՐԻԱՆՅԱՆ

ԱՊԱԳԱՅԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՆՑԵՊՏՈՒՄ «ԿԻՔԵՐԱՆԿ» ՈՃԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Ներկայացվում են ժամանակակից քաղաքային միջավայրերի առաջ բերած պահանջների վերլուծություն, ապագայի քաղաքի կոնցեպտուալ դիզայն առաջարկ՝ կիրառելով «կիբերպանկ» ոճը:

Առանցքային բառեր. ապագայի քաղաքային միջավայր, «կիբերպանկ» ոճ, կենսագործունեություն, արդյունավետություն, նորարարական հայեցակարգ:

Ներածություն. Մարդկային գործունեության ընթացքը և բնակչության ժողովրդագրական աճը հանգեցրել են տարատեսակ էկոլոգիական խնդիրների, որոնցից են՝ մթնոլորտի աղտոտումը, ռեսուրսների անհաշվենկատ սպառումը, որպես հետևանք հանգեցնելով կլիմայի գլոբալ փոփոխության, վտանգելով գոյատևման կենսական միջավայրը: Մերօրյա բնակավայրերը կանգնած են նմանատիպ բնական և մարդածին վտանգների առջև:

Ժամանակակից քաղաքային միջավայրերի դիզայնի լուծումների և հայեցակարգերի մեծ մասի միտումը՝ մարդու կենսագործունեության միջավայրը դարձնելն առավել մեղմ և չճնշող [1, 2]՝ բնակության, աշխատանքի, հանգստի և ժամանցի գործընթացներում մարդու լարվածությունը նվազեցնելու նպատակով, կիրառման ընթացքում ի հայտ է բերում նախատեսված կերպով միջավայրերի ընկալման համար տարատեսակ խոչընդոտներ:

Նշված խնդիրներն առաջ են բերում միջավայրերի դիզայնին ներկայացվող նոր պահանջներ, որոնց լուծումը պետք է փնտրել ինժեներական դիզայն նախագծման և գեղագիտական ընկալման նոր հայեցակարգերով:


Հետազոտություն. Տեխնոլոգիաների զարգացմամբ և բնակավայրերի խտացմամբ պայմանավորված՝ ապագայի քաղաքներ նախագծելը դարձել է առաջնային խնդիր, որի լուծման համար այժմ մշակվում են «Կայուն քաղաքներ և համայնքներ» ISO/TC 268 տեխնիկական հանձնաժողովի կողմից հիմնարար ստանդարտներ [3] և ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 17 նպատակներ» [4]:

Համաձայն Ի. Նյուտոնի երկրորդ՝ շարժման օրենքին, ուժը հավասար է օբյեկտի զանգվածի և նրա արագացման բազմապատիկին: Այլ կերպ ասած, առարկան հրելիս արագանում է այն ուղղությամբ, որով հրվել է: Վաշինգտոնի Պետական համալսարանի ֆիզիկոսները ստեղծել են բացասական զանգվածով

հեղուկ, որը հրելու դեպքում շարժվում է հետընթաց [5]: Ֆորբսը և նրա գործընկերները բացասական զանգվածի համար պայմաններ ստեղծեցին՝ ստեղծելով ռուբիդիումի (${}_{37}\text{Rb}$) ատոմները բացարձակ զրոյի մակարդակից մի փոքր բարձր՝ ստեղծելով, այսպես ասած, Բոզե-Էյնշտեյնի կոնդենստը: Բացասական զանգված ստեղծելու համար հետազոտողները կիրառեցին լազերների երկրորդ հավաքածու, որոնք ատոմներին հարվածում էին այս ու այն կողմ և փոխում դրանց պտտման եղանակը:

Ապագայի քաղաքի հայեցակարգային դիզայն առաջարկ. Քաղաքային միջավայրերի նախագծման դիզայներական, ինժեներական և ճարտարապետական լուծումները մեծ մասամբ իրականացվում են բնածին արհավիրքներին դիմադրողունակության (երկրաշարժակայունություն, խոնավ- և ջրակայունություն, ջերմա- և հրդեհակայունություն և այլն) տեսանկյունից ելնելով: Բնածին արհավիրքների հանկարծակի կամ կանխատեսելի ընթացքը առաջացնում է մեծամասշտաբ ավերածություններ, որոնք հանգեցնում են մարդկային և նյութական մեծ կորուստների: Սրանցից քաղաքները պաշտպանելու լուծում գտնելու համար կատարվել է նոր տեխնոլոգիաների հետազոտություն:


Հետազոտությամբ բերված դրական և բացասական զանգվածներով նյութերի՝ իրար հետ համաչափ հակազդեցության ապահովմամբ առաջարկվում է մոդուլային սկզբունքով (3 հիմնական մոդուլ) քաղաքի հայեցակարգ (նկ. 1): Մոդուլներն իրար հետ կապված են հատուկ կոմունիկացիոն կամուրջ-թունելներով՝ քաղաքի մեծացման դեպքում ավելացվելու հնարավորությամբ:



Նկ. 1. Քաղաքի եռաչափ սխեմատիկ տեսքը

Հիմնվելով հայտնաբերված նյութի ֆիզիկական հատկությունների վրա, առաջարկվող քաղաքը հնարավորություն է ստանում տեղակայվելու Երկրի մակերևույթից (ցամաքային, ջրային) որոշակի բարձրության վրա (առանց հենասյուների կամ այսօր կիրառվող այլ մեթոդների): Այն օդում լիտացիայի վիճակում

պահելու համար առաջարկվում է երկշերտ հիմք, որի վերին շերտում տեղակայված է մարդկային կենսագործունեության հատվածը, որն ունի դրական զանգված: Ստորին շերտում առաջարկվում են տեխնոլոգիական լուծումներով կառուցված սենյակներ, բացասական զանգվածով հեղուկի պահոցներ, լազերների և այլ տեխնիկայի կառավարման կետեր (նկ. 2):



Նկ. 2. Մոդուլի սխեմատիկ կտրվածքը (հիմքի շերտերի կառուցվածքը)

Քաղաքը՝ Երկրի մակերևույթից բարձր գտնվելու շնորհիվ, դառնում է մի շարք բնական արհավիրքներից՝ երկրաշարժերից, ջրհեղեղներից, ցունամիներից, հրաբխի ժայթքումներից, փոթորիկներից և այլն, նաև մթնոլորտի բացակայությունից կամ անբարենպաստությունից պաշտպանված:

Քաղաքի շարժունակությունը թույլ կտա այն տեղակայել մինչ այժմ բնակության և կենսագործունեության համար անբարենպաստ համարվող միջավայրերում՝ օվկիանոսներ, անապատներ, լեռնային գոտիներ, անմարդաբնակ և անբարենպաստ կղզիներ և այլն: Քաղաքի պաշտպանվածության և ինքնաբավության հայեցակարգը թույլ է տալիս եզրակացնել, որ այն կարող է տեղակայվել նաև տիեզերքում, կիրառվելով որպես գաղութաբնակեցման ժամանակավոր կամ մշտական լուծում:


«Կիբերպանկ» ոճի կիրառում, ապագայի քաղաքի հայեցակարգային դիզայն առաջարկում. Ապագայում կենսագործունեության իրականացման ձևի փոփոխության անհրաժեշտությունը [6, 7, 8] առավել պահանջված է դարձնում մարդկային կենսագործունեության գրեթե բոլոր փուլերը համատեղող՝ աշխատանքի, բնակության, հանգստի ու ժամանցի միջավայրերի համակցման լուծումներով բնակարանները [9, 10]: Միջավայրը, դեկորատիվ, գունային և լուսային լուծումներ կիրառելով, ակտիվացնելու համար առաջարկվում է «կիբերպանկ» ոճը՝ լայն տարածում գտած երիտասարդության և ակտիվ բնակչության շրջա-

նակներում [11]: Աստիճանաբար մեծանում է հանրության հետաքրքրվածությունը ոճի հանդեպ (virtual expo Դուբայ 2020 [12], Marshmello-ի համերգը Fortnite խաղում 2019թ., Meta [13] և այլն), ինչի արդյունքում այն առցանց տիրույթից աստիճանաբար ներթափանցում է կենցաղ:


«Կիբերպանկը» նպատակահարմար է կիրառել գրեթե բոլոր ոճերի ճարտարագիտական լուծումներով շենքերի և միջավայրի ստեղծման նպատակով, ինչը թույլ է տալիս արդունավետորեն ինտեգրել բնակչության տարիքային բոլոր շերտերին և խառնվածքի բոլոր տիպերի մարդկանց:

Ոճի իրական կիրառմամբ միջավայրերի նախագծերը՝ քաղաքային, բնակելի և այլ կենսական միջավայրերի համար, օրեցօր ավելանում են Ճապոնիայում, Ամերիկայում և այլուր: Ոճն առաջարկում է կենսագործունեության բոլոր միջավայրերի ֆունկցիոնալ և էսթետիկ լուծումներ:

Հիմք ընդունելով հետազոտված «Կիբերպանկ» ոճի առանձնահատկությունները, առաջարկվող քաղաքի հայեցակարգում այս ոճով աշխատանքային և բնակելի միջավայրերը (նկ. 3, 4) կբարձրացնեն բնակիչների կենսագործունեության արդյունավետությունը, կապահովեն հոգեկան և ֆիզիկական առողջությունը:



Նկ. 3. Քաղաքային միջավայրի, շենքերի հայեցակարգ



Նկ. 4. Ննջասենյակի և խոհանոցի ինտերիերի հայեցակարգ

Հանգստի և ժամանցի գոտիները չեն ճնշի բնակիչներին միապաղաղությամբ, այլ կակտիվացնեն և տրամադրություն կհաղորդեն, կբարձրացնեն բնակիչների աշխատունակությունը: Բնակելի շենքերի միջանցները և անցումային

գոտիները կկրեն ֆունկցիոնալ նպատակներ, դառնալով կապող հանգույց բնակելի միջավայրի և արտաքին աշխարհի հետ:

Եզրակացություն. Այսպիսով, առաջարկվում է ապագայի բազմաֆունկցիոնալ քաղաքի կոնցեպտ, բնակավայրերի կառուցման և տեղակայման նոր հայեցակարգ, որով տրվում է քաղաքի՝ բնական և մարդածին արհավիրքների որոշ տեսակներից բնակիչների պաշտպանողունակության, մինչ այժմ բնակության և կենսագործունեության համար անբարենպաստ տարատեսակ պայմաններում կենսաապահովման հնարավորության, այլ մոլորակների գաղութաբնակեցման հնարավորության լուծումներ:

Հայեցակարգային առաջարկը տալիս է ժամանակակից միջավայրի դիզայնին ներկայացվող պահանջների լուծման հնարավորություն նոր ճարտարագիտական լուծումներով շենքերի և միջավայրերի կառուցման համար (հիմնվելով ոճի՝ հնի հետ համադրվելու առանձնահատկության վրա)՝ տարբեր տարիքի, խառնվածքի տիպերի և հետաքրքրությունների մարդկանց ինտեգրելու նոր տրամաբանությամբ քաղաքային և գործունեության միջավայրում:

Առաջարկը հետազոտական և գաղափարային հիմք կարող է դառնալ նոր լուծումներով դիզայն նախագծային առաջարկների համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Բնակարանի ինտերիերը անցյալում, ներկայում և ապագայում» նախագիծ, **American Home Shield** Каким будет интерьер будущего? (fishki.net) (ռուսերենով՝ The Past, Present and Future of Every Room in One Photo (ahs.com)), 14.11.2022թ.
2. «Մինիմալիզմը ինտերիերում» հոդված, **Ի.Մեդվեդևա** - Минимализм в интерьере: примеры дизайна, фото – Rehouz, 14.11.2022թ.
3. ISO/TC 268 - https://www.iso.org/ru/committee/656906.html, 13.04.2021թ.
4. ՄԱԿ-ի կայուն զարգացման 17 նպատակները - https://www.iso.org/ru/sdgs.html, 28.04.2021թ.
5. Բացասական զանգված - https://news.wsu.edu/2017/04/10/negative-mass-created-at-wsu/, 25.04.2021թ.
6. Համաճարակի կրկնման հավանականություն, **ԱՀԿ** հայտարարություն - Программное заявление ВОЗ о принципах здорового восстановления после пандемии COVID-19 (who.int), 15.11.2022թ.
7. Համաճարակի կրկնման հավանականության բժիշկների գնահատականը, հոդված, **Ա. Ռոմանենկովա** - Медики оценили вероятность новой пандемии (life.ru), 15.11.2022թ.
8. «Ինտերիերի կազմակերպում համաճարակի պայմաններում» հոդված, **Ե.Քերրիշ** - Ковид-дизайн. Как обустроить жильё во время пандемии (часть 1), рубрика Интерьер | на archiprofi.ru, 08.11.2022թ.

9. «Համաճարակի ազդեցությունը ինտերիերի դիզայնի վրա» հոդված, **L.Տուրիչկինա** - [Как пандемия повлияла на дизайн интерьеров | GeekBrains - образовательный портал \(gb.ru\)](#), 08.11.2022թ.
10. «Ինտերիերի դիզայնի և ճարտարապետության ապագայի միտումները» հետազոտական նախագիծ, ղեկավար **Կ.Իգնատև** - [Тренды будущего в дизайне интерьера и архитектуре \(design-mate.ru\)](#), 14.11.2022թ.
11. **Ֆենիչ Օ.Վ.** Կիրբերպանկ ոճի ինտերիերների նախագծման առանձնահատկությունները, Вестник науки 2021г. том 4: №4 (37).- С. 161 - 169.
12. Վիրտուալ էքսպո Դուբայ 2020 - [Expo Map | World Expo \(virtualexpodubai.com\)](#)
13. Մետա միջավայր - [Meta Connect 2022: Meta Quest Pro, More Social VR and a Look Into the Future | Meta \(fb.com\)](#), 14.11.2022թ.

Г.А. ДЕМИРХАНИЯН

ПРИМЕНЕНИЕ СТИЛЯ КИБЕРПАНК В КОНЦЕПЦИИ ГОРОДА БУДУЩЕГО

Проведен анализ требований современных будущих городских сред. Представлено концептуальное проектное предложение города будущего в стиле Киберпанк.

Ключевые слова: городская среда будущего, стиль Киберпанк, жизнедеятельность, эффективность, инновационная концепция.

G.A. DEMIRKHANYAN

APPLYING THE CYBERPUNK STYLE IN THE CONCEPT OF THE CITY OF THE FUTURE

The requirements set to the future urban environments are analyzed, a conceptual design proposal of the city of the future in the Cyberpunk style is introduced.

Keywords: urban environment of the future, Cyberpunk style, vitality, effectiveness, innovative concept.